

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության
«Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում
2018թ. տարեկան (01.01.2018թ.-31.12.2018թ.) կատարված աշխատանքների

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018թ. Օրացույցային պլանի համաձայն կատարվել են ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնային համալիրների աշխատանքային վիճակների ստուգումներ, որոնց հիման վրա էլ կազմվել է անհրաժեշտ շինարարական և վերանորոգման աշխատանքների ցանկ:

«Անտենային էտալոնների պահպանումը և զարգացումը» ծրագրի շրջանակներում ԳԷՊԻ-1, ԳԷՊԻ-2 էտալոնների չափման ճշտությունները պահպանելու և բարձրացնելու համար անհրաժեշտ է պարբերաբար կատարելագործել սարքավորումները՝ հաշվի առնելով ալեհավաքների պարամետրերի չափման զգայնությունների բարձրացման արդի աճող պահանջները:

Ստուգվել է առաջնային և երկրորդային անտենաների տեխնիկական վիճակը, վերականգնվել են անտենաների օպտիկական կարգաբերման համակարգերը: Օպտիկական մեթոդով ստուգվել է ճառագայթիչի և անտենայի գլխավոր առանցքի համաառանցքականությունը՝ ճառագայթող և ընդունող անտենաների համար:

Ընտրվել և ձեռք են բերվել անհրաժեշտ սարքավորումները՝ ԳԷՊԻ-2 անտենային կոմպլեքսի էտալոն-վկայի պաշտպանական ծածկի շարժողական համակարգի աշխատունակությունը ապահովելու և վերականգնողական աշխատանքների համար:

Վերականգնվել և փորձարկվել է էտալոնային համակարգի էտալոն վկայի պաշտպանական ծածկի շարժողական մեխանիզմը:

Կատարվել է էտալոն-վկայի սպասարկող հարթակի բարձրացման շարժիչի մեխանիզմի վերանորոգում:

Մշակվել և պատրաստվել է էլքում ավելի փոքր աղմուկներով նոր նախաուժեղարարի սխեմա, որի օգտագործումը հնարավորություն կտա մեծացնել անտենային կոմպլեքսով կատարվող չափումների դինամիկ դիապազոնը:

Միննույն ժամանակ կատարվել են նոր նախաուժեղացուցչի փորձարկումները լաբորատոր պայմաններում, որտեղ հաղորդող ռուպորային Ս6-23P անտենան հաղորդիչ է, իսկ Ս6-14 ռուպորային անտենան՝ ընդունիչ: Արդյունքում ստացվել են ընդունող անտենայի ճառագայթման դաշտի ուղղվածության մի շարք դիագրամաներ: Ստացված դիագրամաները ցույց տվեցին, որ նոր նախաուժեղացուցչի աղմուկների մակարդակը նախորդ ուժեղացուցչի հետ համեմատած 4 ԴԲ ցածր է: Դա հնարավորություն է տալիս մեծացնել ԳԷՊԻ-1 անտենայի չափումների դինամիկ դիապազոնը:

Ուսումնասիրվել է (0,4-0,75) մ տրամագծով ալեհավաքների ստուգաչափման համար նախկինում պատրաստված 0,25մ բացվածքով ռուպորային անտենայի վերականգնման անհրաժեշտությունը, կատարվել են ավելի պարզ կարգաբերման համակարգի ստեղծման համար անհրաժեշտ նախագծման աշխատանքներ: Նախագծվել և պատրաստվել են նոր ռուպորային անտենայի հիմնական էլեմենտները:

Կատարվել են ԳԷՊԻ-2 էտալոնային համակարգի պլանային չափումներ նոր նախաուժեղարարի կիրառմամբ: Չափման ընթացքում հայտնաբերվեցին մի շարք թերություններ.

ա.) Ընդունող ԳԷՊԻ-2 անտենայի ճառագայթիչը շեղված է, կատարվել են անհրաժեշտ ճշգրտումներ:

բ.) Ի հայտ եկան սնուցող մալուխների վնասվածքներ, որոնք առաջանում են շարժման ժամանակ. կատարվել է մալուխների ժամանակավոր վերականգնում, որոնք հետագայում ենթակա են փոխարինման:

գ.) Վնասվել է ԳԷՊԻ-2 աշտարակի վերին մասում գտնվող անտենայի տեղադրման համար նախատեսված օժանդակ հարթակի վերամբարձ մեխանիզմը, փոխարինվել է վնասված մեխանիկական շղթան:

Կատարվել են ԳԷՊԻ-0.5 էտալոնով չափումներ լրիվ ավտոմատ ռեժիմում:

Կատարվել են նոր տիպի անտենաների նախագծման աշխատանքներ. աշխատանքների արդյունքներից ներկայացվել է 3 զեկույց «IRFE-2018» միջազգային գիտաժողովում (Ադվերան, սեպտեմբերի 19-21, 2018թ.):

1. N. Khachatryan, R. Ter Antonyan - Simple Formulae a United Character Simplifying the Radiophysical Design of Dual-Reflector Axisymmetric Antennas with a Given Polar Equation of the Generatrix of the Main Reflector.
2. R. Ter Antonyan- A New Reflector Antenna Having Switchable Beamwidth at Operating Frequency.
3. R. Ter Antonyan -To the Development of a Feed for a Dual-Reflector Radio Telescope with a Fixed Hemispherical Main Reflector and a Movable Subreflector of the Gregory Type.

Մտավոր սեփականության գործակալության կողմից 15.06.18թ. որոշում է կայացվել հասկացնել գյուտի արտոնագիր «Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության կողմից ներկայացված «Հայելային առանցքային համաչափությամբ ալեհահավաք» աշխատանքին (Ռուբեն Տեր Անտոնյան, Նորայր Խաչատրյան՝ «Հայելային առանցքային համաչափությամբ ալեհահավաք». ԱՐՏՈՆԱԳԻԲ՝ No 521Ս, հայտ՝ No AM20180022Ս, 16.06.2016.(20), 2018թ.):

«Մթնոլորտի և ջերմային ճառագայթման աղբյուրների ֆիզիկական բնութագրերի չափումների չափագիտական ապահովման մեթոդների ուսումնասիրություն և մշակում» ծրագրով նախատեսվում է ինֆրակարմիր ճառագայթման աղբյուրներից մթնոլորտ արտանետվող տաք գազային զանգվածների, ինչպես նաև տարբեր տարածքներում և ծավալներում աերոզոլային մասնիկների ֆիզիկա-էկոլոգիական պարամետրերի օպտիկա-էլեկտրոնային չափումների չափագիտական ապահովության մեթոդների ուսումնասիրում և մշակում:

Մթնոլորտի բնապահպանական պարամետրերի տեսական հետազոտությունների բնագավառում իրականացվել են շրջակա միջավայրում աերոզոլային մասնիկների խտությունների և չափսերի չափման համար նախագծված «Մասնիկ-Ա» աերոզոլային սպեկտրաչափի չափագիտական ատեստավորման մեթոդիկայի և ծրագրի մշակման աշխատանքները:

Կատարվել է նաև մթնոլորտ արտանետված տաք գազային զանգվածների, ինչպես և ջերմային աղբյուրների ֆիզիկա-էկոլոգիական պարամետրերի չափումների նպատակով

մշակված ունիվերսալ ինֆրակարմիր սպեկտրոռադիոմետրի մետրոլոգիական բնութագրերի տեսական հետազոտությունների մեթոդների մշակում:

Մշակվել են լավագույն չափագիտական պարամետրեր ունեցող օպտիկա-էլեկտրոնային սարքավորումներով մթնոլորտում գազա-աերոզոլային աղտոտվածության հսկողության մեթոդները:

Կատարվել են ունիվերսալ սպեկտրալ ռադիոմետրի չափագիտական պարամետրերի որոշման մեթոդիկաների տեսական հետազոտություններ:

Քանի որ մթնոլորտում աշխատող բոլոր սարքեր-սարքավորումների համար չափագիտական տեսանկյունից անհրաժեշտ են մթնոլորտային գազերի լուսացրման հատկությունները, մշակվել է «մաքուր գազերի լուսացրման հետազոտություններ» նոր փորձարարական մեթոդը:

Զգալի աշխատանքներ են կատարվել տեսական հետազոտությունների բնագավառում: Օպտիկա-էլեկտրոնային սարքավորումների լավագույն չափագիտական պարամետրեր ապահովելու նպատակով կատարվել է տեսական հետազոտություն՝ երկբևեռ կիսահաղորդչային սարքերի հենքի վրա մշակել բարձր զգայնության ֆոտոընդունիչ հանգույցներ. բերված է այդ նպատակին հասնելու տեսական հնարավորության հիմնավորումը:

Արդյունքները գիտական հոդվածի տեսքով տպագրվել են միջազգային գիտական ամսագրերում:

1. Ruben Asatryan, Norayr Khachatryan, Hamlet Karayan - The Theoretical Research Metohodology of Metrological Parameters of Universal Spectral Radiometer. International Journal of Engineerning Applied Sciences and Tecnology, 2018, vol.3, issue1, ISSN No.2455-2143, Pages 1-5. Published May 2018 in IJEAST (<http://www.ijeast.com//>).
2. Ruben Asatryan, Norayr Khachatryan, Hamlet Karayan - The Metods of Gaz-Aerazol Pollution Control in Atmosphere by Equipments with Best Metrological Parametres.

International journal of Engineering Applied Sciences and Technology, 2018, Vol. 3, issue 3, ISSN No. 2455-2143, Pages 22-25. Published July 2018 in IJEAST (<http://www.ijeast.com/>).

3. Р.С. Асатрян, Г.С. Караян, Н.Р. Хачатрян Методика Метрологической Аттестации Оптико-Электронного Измерителя Аэрозольных Частиц в Окружающей Среды. Colloquium-Journal ISSN 2520-6990, №3 (14) (2018).

4. Р.С.Асатрян, Н.Р.Хачатрян, Г.С.Караян. Оптическая Градуировка и Метрологическая Аттестация Измерителя Прозрачности Атмосферы. PHYSICO-MATEMATICAL SCIENCES «Colloquium Journal» #9.

5. Ruben Austrian, Norayr Khachatryan, Hamlet Karayan, Theoretical Grand of Creation of highly Sensitivity Photodetector Basis on Multistable Senicon-ductor Structure, Intern. Journ. Of Engi. Appl. Sci. and Technol., 2018, Vol. 3, Issue5., pages 1-4.

6. Р.С.Асатрян, Об одном методе исследований молекулярного светорассеяния чистых газов, Вестник НПУА Армении, Электротехника, Энергетика, №2, Ереван. 2018.

7. Асатрян Р.С., Хачатрян Н.Р., Караян Г.С., Об одном методе дистанционного инфракрасного мониторинга. “Colloquium - journal” #13(24), 2018/ Technical science.

ՓԱՍՏԱՑԻ ԾԱԽՍԵՐ (01.01.18 - 31.12.18)

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԾԱԽՍԵՐ՝ 44 226.0 հազար դրամ, այդ թվում՝

1. Աշխատավարձ՝ 40 000.0 հազար դրամ:

Աշխատանքներին մասնակցել է 28 մարդ:

2. Անտենային էտալոնների պահպանում և զարգացում՝ 4226.0 հազար դրամ, այդ թվում՝

- ✓ Կոմունալ ծախսեր՝ 2154.0 հազար դրամ,
- ✓ Հողի հարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ 272.0 հազար դրամ,
- ✓ Գույքահարկ (Արագածի գիտական կենտրոնի)՝ 1200.0 հազար դրամ,
- ✓ Տրանսպորտային ծախսեր (Երևան-ԱԳԿ) 600.0 հազար դրամ:

«Չափագիտության ազգային
ինստիտուտ» ՓԲԸ-ի գլխավոր
տնօրենի պաշտոնակատար



գլխավոր հաշվապահ

ՀԱՅԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՌՈՒԶԱՆՆԱ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«Չափազիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության «Ենթակառուցվածքների պահպանում և զարգացում» ծրագրի շրջանակներում 2018թ. սեպտեմբեր (01.01.2018թ.-31.12.2018թ.) փաստացի կատարված ոչ ֆինանսական ցուցանիշների վերաբերյալ ՉԱԵԿԸՏԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագրային դասիչը		Անվանումը																	
		Անտեսային խտությունների պահպանումը և զարգացումը																	
1162	ԱՇ11	Եկարագրություն		Ոչ ֆինանսական ցուցանիշներ /պլան/					Ոչ ֆինանսական ցուցանիշներ /փաստացի/					Օրդրան պատ- ճամբուր					
		ՀՀ ազգային էալոմեմբրա դրոշմ համադրում եմ ԱՊՀ միջակայական էալոմեմբրա, ծրագրի շրջանակներում ներկայան եմ զարգացման և պահպանման՝ իրենց անբողջ համեմակություն: էալոմեմբրա պահպանությունը, աղբիվակահանգումը և զարգացումը հնարավորություն կտան ապահովելու դրանց օգտագործումը երկազ գիտատեխնիկական պահանջներին համահունչ: էալոմեմբրա ունեն անմիջական կիրառական նշանակություն և թույլ են տալիս բարձրացնելու անսենային չափումների հշտությունը, հավատարմությունը և վիճակահանությունը: Ազգային էալոմեմբրա պահպանությունը հնարավորություն կտա դրանք համապատասխանեցնել վիճակային ստանդարտներին:		1 եռամսյակ		1 կիսամսյակ		9 ամիս		Տարի		1 եռամսյակ		1 կիսամսյակ		9 ամիս		Տարի	
Չափորոշիչներ		Անտեսային համակարգիչում պահանջվող շափոններ		1		1		1		1		1		1		1			
Քանակական				1		1		1		1		1		1		1			
Որակական		ԱՊՀ երկրները միջակայական ստանդարտների ստանդարտացում /8.193-76, 8.463-82, 8.533-85, 8.416-81, 8.194-76, 8.413-81, 8.414-81/																	

«Չափագիտության ազգային ինստիտուտ» ՓԲ ընկերության «Գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքների պահպանման և զարգացման» ծրագրի շրջանակներում հաստատված հաստիքացուցակը համապատասխան դրույքաչափերով համաձայն Հրաման 13-Ա ստ 25.01.2018թ. և Հրաման 59-Ա ստ 16.03.2018թ.

Հ/Հ	Անուն, Ազգանուն	Հաստիքի անվանում	Աշխատավարձ 12 ամիս 2018թ. ՀՀ դրամ
1	Խաչատրյան Նորայր	Էտալոնների պահպանման բաժնի պետ	2,260,000.00
2	Վարդանյան Ալեքսանդր	Առաջատար մասնագետ	1,947,965.00
3	Յոյյան Նորայր	Գիտական պահապան	1,626,904.00
4	Մարտոյան Գևորգ	Առաջատար մասնագետ	2,638,855.00
5	Միկելյան Արմեն	Գիտական պահապան	1,664,603.00
6	Թազվորյան Էլիզա	Գիտական պահապան	1,661,212.00
7	Բարսեղյան Ստեփան	Գիտաշխատող	870,482.00
8	Ասատրյան Ռուբեն	Ավագ գիտաշխատող	1,198,182.00
9	Տեր-Անտոնյան Ռուբեն	Ավագ գիտաշխատող	1,440,000.00
10	Պարտիզյանյան Գեղամ	Գիտական պահապան	1,646,541.00
11	Խաչատրյան Ռուբինե	Գիտաշխատող	1,293,334.00
12	Մովսիսյան Անդրանիկ	Գիտաշխատող	1,294,279.00
13	Ներսեսյան Աշոտ /հունվարից հուլիս/	Մասնագետ	846,142.00
14	Բարխուդարով Էոնեստ	Ավագ գիտաշխատող	1,373,535.00
15	Տարսայան Սամվել	Կոնստրուկտորա-հետազոտական ծառայություն	2,600,000.00
16	Հայաջյան Լյովա	Մասնագետ	1,466,967.00
17	Սարգսյան Արմեն	Մեխանիկ	1,108,893.00
18	Հաջոյան Մերգեյ	Մեխանիկ	1,132,376.00
19	Զարոյան Բաղդասար	Մեխանիկ	1,136,958.00
20	Հովհաննիսյան Վարդան	Մեխանիկ	1,138,709.00
21	Խաչատրյան Սամվել	Էլեկտրիկ	1,150,476.00
22	Գրիգորյան Հարություն	Պահակ	1,149,814.00
23	Սարգսյան Աշոտ /մարտից սկսված/	Պահակ	990,718.00
24	Չաթոյան Էդգար /հունվարից օգոստոս/	Պահակ	1,187,365.00
25	Գենջոյան Իսրայել	Պահակ	1,097,549.00
26	Խաչատրյան Անդրանիկ	Պահակ	1,149,040.00
27	Գենջոյան Ալյեք	Պահակ	1,130,519.00
28	Կարապետյան Վոլոդյա /հունվար, փետրվար/	Պահակ	202,679.00
29	Չաթոյան Էդիկ Վասիլի	Պահակ	400,000.00
30	Հարությունյան Արթուր	Պահակապետ	660,000.00
31	Հարությունյան Լյուսյա	Հավաքարար	594,027.00
			40,058,124.00



ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ պաշտոնակատար

ԳԼԽԱՎՈՐ ՀԱՇՎԱՊԱՀ

[Signature] Հ. Ռ. Ստեփանյան
(ստորագրություն)

[Signature] Բ. Ա. Ստեփանյան
(ստորագրություն)